

«ի րիկանց կողմանէ» (Կաղ. 126), եւ այնպէս զնեւում կամ փոխեւում սպասները : Ասոր պատճառ՝ բազմեւոց զիրքն էր, որոյ փոփոխութեամբ՝ ծառայից տեղն ալ պիտի փոխուի յետոյ (տես 197) :

21. — Հիւրամեծարութիւն : — Մինչ զեւ ծառայից դասն այդպէս կերակրները կը պաշտէ, կոչնատէրն ալ յատուկ դեր մը կը կատարէ հրաւիրելոց հանդէպ : Բարձի պատուադիր ուշադրութենէն զատ՝ զոր ըրած էր ի սկզբան (աստ, 164), ստէպ կ'եւնէ իւր բազմոցէն, եւ քաղաքավար հոգածութեամբ մը կը դառնայ անոնց չորս կողմը, «զնոքօք շրջեւում» . կը խօսակցի իւրաքանչիւրին հետ «քաղցր բանիւք» (Մանդ. 59), զորս ուրիշ մը կը կոչէ «բանս ուրախարարս եւ խրախճանականս, որ յոյժ լաւագոյն է հիւրոցն՝ քան զկերակուրսն» (Ընդհ. 29), եւ մինչեւ անգամ խոնարհաբար «սպասաւորեւում» անոնց, ու հսկեւում մանաւանդ՝ որ կերակուր կամ ըմպելի չպակսի անոնց առջեւէն (Մանդ. 59) : Այս ձեւերն ըստ վերջին խստադատ նկարագրողիս ուրիշ բան չեն՝ բայց «սուտակասպասութիւն» (60). զի բնականապէս քաղաքավարութիւնն անկեղծութեան հայելին չէ միշտ՝ ոչ այսօր եւ ոչ անցելոյն մէջ : Մեր գինւոյ ժամանակ ալ կը